



Ի՞նչ կարող եմ անել, եթե ինձ ծառայություններ տրամադրողը փոխի իմ տնային ծառայությունների պայմանավորվածությունը:

1800 951 822
agedcarequality.gov.au

Այս տեղեկատվական թերթիկը ուղեցույց է տրամադրում այն մարդկանց, ովքեր օգտվում են տնային ծառայություններից Տնային խնամքի փաթեթների ծրագրի միջոցով, և ինչ կարող եք անել, եթե ձեր ծառայություններ տրամադրողը ցանկանում է փոփոխություններ կատարել ձեր տնային ծառայության կազմակերպման մեջ:



Ինչ պետք է իմանաք, երբ ձեր ծառայություններ տրամադրողը փոփոխություններ է կատարում

Հնարավոր է, որ ձեր տնային խնամքի և ծառայությունների պայմանավորվածությունները ժամանակի ընթացքում փոխվեն: Կան բազմաթիվ պատճառներ, թե ինչու են այս փոփոխությունները տեղի ունենում, ինչպիսիք են՝ ձեր խնամքի կարիքների փոփոխությունները կամ ձեր ծառայությունների մատուցման ծախսերը:

Դուք իրավունքներ ունեք, և ձեր ծառայություններ տրամադրողը պետք է կատարի իրավական պարտականություններ, երբ խնդրում է ձեզ փոփոխություններ կատարել ձեր պայմանավորվածությունների մեջ: Հնարավոր է, որ անհրաժեշտ լինի փոփոխություններ կատարել ձեր տնային խնամքի պայմանագրի պայմանների, ձեր ստացած խնամքի և ծառայությունների և (կամ) ձեր բյուջեի մեջ:

Ձեր պայմանագիրը

Ձեր տնային խնամքի պայմանագիրը իրավական պայմանագիր է ձեր և ձեր ծառայություններ տրամադրողի միջև: Այն սահմանում է, թե ինչպես են տրամադրվելու ձեր խնամքն ու ծառայությունները, ով է դրանք տրամադրելու և որքան կարժենա: Որպես այս պայմանագրի մաս, ձեր ծառայություններ տրամադրողը պետք է նաև տրամադրի ձեզ անհատական բյուջե և ձեր խնամքի և ծառայությունների ծրագիրը:

Ձեզ չպետք է շտապեցնեն կամ ձեր վրա ճնշում գործադրեն համաձայնության գալու համար: Դուք կարող եք ժամանակ տրամադրել այն հասկանալու համար՝ նախքան այն ստորագրելը:

Ձեր ծառայություններ տրամադրողը պետք է խոսի ձեզ հետ ձեր պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին, երբ.

- ձեր խնամքը փոփոխվելու կարիք ունի
- ձեր ծառայությունների փաթեթի աստիճանը փոխվում է
- դուք խնդրում եք վերանայել
- ձեր ծառայություններ տրամադրողի ծախսերը փոխվում են, կան՝
- կառավարությունը փոփոխություններ է կատարում տնային ծառայության ծրագրերում կամ ֆինանսավորման կարգավորումներում, և դա փոխում է ձեր խնամքի պայմանները:

Երբ ձեր պայմանագրում փոփոխություններ կատարվեն, ձեզ պետք է տրվի ձեր թարմացված պայմանագրի պատճենը:

Ձեր ծառայություններ տրամադրողը պետք է հարցնի ձեզ՝ համաձայն եք արդյոք փոփոխություններին: Պարտադիր չէ, որ դուք ֆիզիկապես ստորագրեք փաստաթուղթը՝ ձեր համաձայնությունը նշելու համար, սակայն ձեր ծառայություններ տրամադրողը միշտ պետք է գրավոր արձանագրի, որ դուք համաձայնել եք փոփոխություններին:

Գների սահմանում

Ձեր ծառայություններ տրամադրողը պետք է տեղեկացնի ձեզ, եթե ցանկանում է փոխել գները, որոնք գանձում է ձեր խնամքի և ծառայությունների համար, և դրա պատճառները: Եթե ձեր ծառայություններ տրամադրողը ցանկանում է փոխել գները, նա պետք է.

- տրամադրի հստակ բացատրություն, թե ինչ կարժենա ձեր խնամքն ու ծառայությունները
- տրամադրի հստակ բացատրություն բարձրացման պատճառների մասին (օրինակ՝ աշխատավարձի բարձրացում, ցուցակագրում, վառելիքի ծախսեր և այլն)
- ապահովի, որ գները, որոնք նա գանձում է, ողջամիտ են (օրինակ, քանի որ դուք օգտվում եք ծառայությունից ձեր Տնային խնամքի փաթեթի միջոցով, ինչպես օրինակ՝ պարտիզպանության ծառայությունները, այն չպետք է շատ ավելի թանկ արժենա, քան եթե դուք ինքներդ կազմակերպեիք այն)
- չքողարկի գների բարձրացումը՝ ավելացնելով լրացուցիչ ժամանակ այն ծառայությունների համար, որոնք չեն պահանջվում (օրինակ՝ դեղորայքի ներարկման համար 2 ժամ գանձել, երբ դա այդքան երկար չի տևում)
- ծառայությունների համար նվազագույն ժամկետներ չսահմանի կամ չգանձի, երբ ծառայությունը դա չի պահանջում (օրինակ՝ միայն 2 ժամանոց ծառայություններ ընդունելը և 15 րոպեանոց ծառայությունից հրաժարվելը)
- ձեզանից գանձումներ չկատարի այն ծառայությունների համար, որոնք դուք իրականում չեք ստանում
- ձեզանից առանձին չգանձի ենթապայմանագրային ծառայությունների համար, նույնիսկ երբ դուք ինքնուրույն կառավարում եք ձեր տնային խնամքի փաթեթը:

Ձեր բյուջեն

Ձեր ծառայություններ տրամադրողը պետք է ձեզ գրավոր անհատականացված բյուջե ներկայացնի, որը մանրամասնում է այն խնամքն ու ծառայությունները, որոնք դուք ստանալու եք, և դրանց գինը: Ձեր փաթեթի աստիճանը կորոշի, թե ինչ միջոցներ կան ձեզ համար, և ձեր բյուջեն կսահմանի, թե ինչպես են ծախսվելու այդ միջոցները:

Դուք պետք է ներգրավված լինեք ձեր բյուջեի պլանավորման մեջ և այն պետք է արտացոլի ձեր գնահատված կարիքները, նպատակներն ու նախասիրությունները:

Ձեր բյուջեն պետք է վերանայվի և փոխվի, եթե փոփոխություններ կան

- ձեր խնամքի և ծառայությունների մեջ
- խնամքի և ծառայությունների մատակարարման ծախսերի մեջ
- եթե դուք խնդրում եք վերանայել ձեր բյուջեն:

Խնամք տրամադրելու ծախսերը ժամանակի ընթացքում կփոխվեն՝ ի պատասխան աշխատավարձի բարձրացման կամ այլ ապրանքների և ծառայությունների գների բարձրացման: Ձեր ծառայություններ տրամադրողը պետք է պարբերաբար վերանայի ձեր բյուջեն ձեզ հետ՝ համոզվելու համար, որ ձեր խնամքի կարիքները շարունակվում են բավարարվել:

Խորհրդակցություն

Եթե ձեր ծառայություններ տրամադրողը մտածում է ձեր խնամքի և ծառայությունների մեջ փոփոխություններ կատարելու մասին կամ ինչպես եք դրանք ստանում, նա պետք է.

- ձեզ տեղեկացնի, թե ինչու է փոփոխությունը անհրաժեշտ
- բացատրի, թե ինչպես ձեզ վրա կազդեն փոփոխությունները
- ձեզ տեղեկատվություն տրամադրի՝ ձեզ օգնելու համար կայացնել տեղեկացված ընտրություն
- տեղեկացնի ձեզ, թե երբ է ցանկանում, որ փոփոխված պայմանավորվածությունները սկսվեն

- բացատրի, թե ինչ այլ տարբերակներ ունեք, եթե համաձայն չեք փոփոխություններին:

Դուք կարող եք խնդրել աջակցող անձի, որ օգնի ձեզ այս քննարկումներն անցկացնել ձեր ծառայություններ տրամադրողի հետ: Սա կարող է լինել ձեր ներկայացուցիչը, շահերի պաշտպանության ծառայությունը, ինչպիսին է Տարեցների պաշտպանության ցանցը (OPAN) կամ թարգմանիչը:

Դուք իրավունք ունեք բոլոր փոփոխությունները բանակցել ձեր ծառայություններ տրամադրողի հետ: Եթե համաձայն չեք փոփոխություններին, կարող եք խոսել ձեր ծառայություններ տրամադրողի հետ այն մասին, թե ինչու է ձեզ հարմար և ինչ եք ակնկալում ձեր ծառայությունների փաթեթից: Դուք կարող եք խնդրել ձեր ծառայություններ տրամադրողին տեղեկացնել ձեզ այլ տարբերակների մասին, որոնք ավելի լավ կաշխատեն ձեզ համար:

Եթե դուք չեք կարողանում համաձայնության գալ ձեր ծառայություններ տրամադրողի հետ, կարող եք կապ հաստատել անվճար և գաղտնի ծառայությունների հետ, ինչպիսին է OPAN-ը՝ ձեր ծառայություններ տրամադրողի հետ պայմանների շուրջ բանակցությունների ժամանակ ձեր շահերի պաշտպանության աջակցության համար:

Եթե ձեզ դուր չի գալիս, թե ինչպես է ձեր ծառայություններ տրամադրողը փոփոխություններ կատարում, կարող եք կարծիք հայտնել կամ դժգոհություն ներկայացնել ձեր ծառայություններ տրամադրողի հետ կամ դիմել Տարեցների խնամքի որակի և անվտանգության հանձնաժողովին (Հանձնաժողով) օգնության համար:

Ծառայությունները համապատասխանում են ձեր կարիքներին, նպատակներին և նախասիրություններին

Խնամքի և ծառայությունների ծրագիրը ուղղված է սպառողներին: Սա նշանակում է, որ ձեր ծառայություններ տրամադրողը պետք է համագործակցի ձեզ հետ՝ որոշելու ձեզ անհրաժեշտ խնամքն ու ծառայությունները, ինչպես նաև երբ են այդ ծառայությունները մատուցվում:

Չնայած ձեր խնամքն ու ծառայությունները ուղղված են սպառողներին, երբեմն.

- ձեր բյուջեն չի կարող ծածկել ձեր ուղած բոլոր խնամքն ու ծառայությունները (օրինակ, եթե ձեզ անհրաժեշտ է հիմնական խնամք, ինչպիսին է բուժքույրությունը, դա առաջնահերթություն կլինի ընդլայնված մաքրման ծառայության նկատմամբ)
- ձեր ծառայություններ տրամադրողը կարող է չկարողանալ մատուցել ձեր բոլոր ծառայությունների նախապատվությունները ճիշտ այնպես, ինչպես կամ երբ դուք ցանկանում եք դրանք
- ձեր ծառայություններ տրամադրողը կարող է խնդրել փոխել ձեր խնամքը կամ ծառայությունները ստանալու ժամը, եթե ձեր նախընտրած ժամին խնամքի աշխատողներ չունենան: Կարևոր է համաձայնող լինել, երբ խնդրանքը ողջամիտ է և բացասաբար չի ազդի ձեր անվտանգության կամ բարեկեցության վրա:

Ցանկացած փոփոխություն պետք է հաղորդվի ձեզ բաց և պարզ ձևով՝ բացատրելով պատճառները, եթե դրանք չեն կարող համապատասխանել ձեր նախապատվություններին: Ինչպես նշվեց վերևում, ակնկալվում է, որ ծառայություններ տրամադրողները խորհրդակցեն ձեզ հետ ձեր խնամքի պայմանավորվածությունների ցանկացած փոփոխության վերաբերյալ:

Ձեր խնամքի և ծառայությունների ծրագիրը պետք է ներառի.

- խնամքն ու ծառայությունները՝ հիմնված ձեր գնահատված կարիքների, նախասիրությունների և նպատակների վրա
- ովքեր կապահովեն ձեր խնամքը, ներառյալ, եթե կօգտագործվեն ենթակապալառուներ
- ձեր ծառայությունների օրը (օրերը), հաճախականությունը և ժամերը

- ձեր ուղած ծառայությունների տեսակների և ձեր ունեցած ցանկացած նախապատվությունների խնդրանքներ, օրինակ՝ խնամքի աշխատողի ձեր ընտրությունը (կախված աշխատողների առկայությունից)
- մանրամասներ այն մասին, թե ինչպես են տրամադրվելու խնամքը և ծառայությունները, ներառյալ ձեր անվտանգությանը և բարեկեցությանը սպառնացող վտանգների նկատառումները:

Եթե համաձայն եք այն փոփոխություններին, որոնք ցանկանում է կատարել ձեր ծառայություններ տրամադրողը, կարևոր է խնդրել ձեր թարմացված պայմանագրի, խնամքի ծրագրի, բյուջեի կամ այլ փաստաթղթերի պատճենը, որպեսզի համոզվեք, որ փոփոխությունները ճիշտ են և պայմանները համաձայնեցված են ձեր ծառայություններ տրամադրողի հետ:

Չնայած փոփոխությունները կատարելու համար որևէ բան ստորագրելու կարիք չկա, կարևոր է, որ պահեք թարմացված փաստաթղթերի պատճենները, որոնք արտացոլում են ձեր խնամքի պայմանավորվածությունների համաձայնեցված փոփոխությունները:

Ձեր ծառայություններ տրամադրողի հետ խնամքի և ծառայությունների դադարեցնելը

Ձեր տնային ծառայությունները դադարեցնելու պայմանները պետք է ներառվեն ձեր տնային խնամքի պայմանագրում:

Կան որոշ հանգամանքներ, երբ ձեր ծառայություններ տրամադրողը կարող է դադարեցնել ձեզ տնային ծառայություններ մատուցելը (կոչվում է պաշտոնավարման անվտանգության դրույթներ): Ձեր ծառայություններ տրամադրողը պետք է օգտագործի այս դրույթները միայն որպես վերջին միջոց:

Եթե ձեր ծառայություններ տրամադրողը ցանկանում է դադարեցնել ձեզ տնային ծառայությունների մատուցումը, ապա նա պետք է բացատրի պատճառները և այդ պատճառների ապացույցը ներկայացնի ձեզ:

Եթե ձեր ծառայություններ տրամադրողը դադարեցնի ձեր խնամքն ու ծառայությունները, ձեր իրավունքն է ընտրել, թե որ կործանող ծառայություններ տրամադրողին եք ցանկանում, որ մատուցի ձեր խնամքն ու ծառայությունները:

Դա նաև ձեր ընտրությունն է, եթե ցանկանում եք դադարեցնել տնային ծառայությունների մատուցումը ձեր ծառայություններ տրամադրողի հետ: Դուք պետք է գրավոր տեղեկացնեք ձեր ծառայություններ տրամադրողին: Ձեր տնային խնամքի պայմանագիրը պետք է մանրամասներ պարունակի պահանջվող ծանուցման ժամկետի և այն մասին, թե արդյոք ինդրանքը պետք է լինի նամակով կամ էլեկտրոնային փոստով: Դուք պետք է աշխատեք ձեր ներկա ծառայություններ տրամադրողի և կործանող ծառայություններ տրամադրողի հետ՝ ապահովելու համար ձեր խնամքի և ծառայությունների շարունակականությունը:

Ձեր ծառայություններ տրամադրողը չի կարող ձեզանից ելքի վճար գանձել իր ծառայությունը դադարեցնելու համար:

Ծառայություններ տրամադրողների համեմատում կամ ընտրում՝ օգտագործելով Տարեցների իմ խնամքը (My Aged Care)

Ձեր ընտրությունն է, թե որ ծառայություններ տրամադրողին եք օգտագործում ձեր խնամքի և ծառայությունների համար:

Տարեցների իմ խնամքը (My Aged Care) կայքը օգնում է ձեզ համեմատել և ընտրել ծառայություններ տրամադրողներին, ինչպես նաև տեղեկություններ է պարունակում նրանց կողմից գանձվող գների մասին: Դուք կարող եք նաև զանգահարել My Aged Care-ին 1800 200 422 հեռախոսահամարով՝ հավելյալ տեղեկատվություն ստանալու կամ այլ ծառայություններ տրամադրողի(ների) փոխելու օգնության համար:

Կարող եք նաև Տարեցների խնամքի մասնագետի հետ անձամբ հանդիպման համար գրանցվել՝ զանգահարելով 1800 227 475 հեռախոսահամարով:

Դուք կարող եք այցելել կայքէջը՝ myagedcare.gov.au.

agedcarequality.gov.au

Շահերի պաշտպանություն և աջակցություն

Դուք կարող եք զանգահարել Տարեցների շահերի պաշտպանության ցանցի (OPAN) աջակցության գիծ՝ 1800 700 600 հեռախոսահամարով անվճար և անկախ տեղեկատվության և աջակցության համար կամ այցելել opan.org.au կայքը՝ հավելյալ տեղեկատվության համար, թե ինչպես նրանք կարող են օգնել ձեզ:

Հանձնաժողովը կարող է ձեզ օգնել

Եթե որևէ մտահոգություն ունեք ձեր խնամքի և ծառայությունների վերաբերյալ, կարող եք ձեր մտահոգությունները հայտնել ձեր ծառայություններ տրամադրողին: Եթե դուք անհարմար եք զգում ձեր ծառայություններ տրամադրողի հետ ձեր մտահոգությունների մասին խոսել, կամ արդեն փորձել եք առանց ընդունելի արդյունքի, կարող եք կապ հաստատել Տարեցների խնամքի որակի և անվտանգության հանձնաժողովի հետ, և մենք կօգնենք ձեզ:

Դուք կարող եք կապ հաստատել Տարեցների խնամքի որակի և անվտանգության հանձնաժողովի հետ՝

Հեռախոսով 1800 951 822

Անցանց agedcarequality.gov.au

Էլ փոստով info@agedcarequality.gov.au

Փոստով Aged Care Quality and Safety Commission, GPO Box 9819, <ձեր մայրաքաղաքը>

Ինչպե՞ս կարող է Հանձնաժողովը ձեզ օգնել

Երբ դուք կապ հաստատեք Հանձնաժողովի հետ, մենք

- կլսենք ձեզ՝ հասկանալու ձեր մտահոգությունները
- կգրուցենք ձեր ծառայություններ տրամադրողի հետ
- կաջակցենք ձեզ և ձեր ծառայություններ տրամադրողին՝ հասկանալու ձեր իրավունքներն ու պարտականությունները

- կիսմոգվենք, որ ձեր ծառայություններ տրամադրողը հասկանում է իր պարտականությունները
- կօգնենք ձեր ծառայություններ տրամադրողին համաձայնել ձեր ակնկալիքներին համապատասխանող գործողությունների ծրագրին
- ձեզ հետ կրկին կապ կհաստատենք՝ պարզելու, թե արդյոք ամեն ինչ բարելավվել է:

Որոշ հարցեր, որ կարող եք տալ ձեր ծառայություններ տրամադրողին

Ձեր ծառայություններ տրամադրողի հետ քննարկումը կարող է օգնել ավելի լավ հասկանալ ձեր կարիքները կամ մտահոգությունները: Կարող եք նաև խնդրել ընտանիքի անդամին կամ որևէ աջակցող անձի խոսել ձեր անունից:

Ստորև ներառված են որոշ հարցեր, որոնք կարող են օգնել ձեզ այս խոսակցությունները վարել ձեր ծառայություններ տրամադրողի հետ:

Իմ ծառայություններ տրամադրողը ցանկանում է փոփոխություններ կատարել իմ խնամքի պայմանավորվածությունների մեջ

- Որո՞նք են այն բոլոր փոփոխությունները, որոնց ցանկանում եք, որ ես համաձայնեմ:
 - Գների փոփոխություններ
 - Խնամքի և ծառայությունների մեջ փոփոխություններ
 - Խնամքի և սպասարկման ժամանակացույցի փոփոխություններ
- Ինչո՞ւ պետք է այս փոփոխությունները կատարեք:
- Կառավարության կողմից այս մասին որևէ տեղեկատվություն կա՞, որ կարող եք ինձ ուղարկել:

Ինչպե՞ս են փոփոխությունները ազդելու ինձ վրա:

- Արդյո՞ք այս փոփոխություններից հետո ես ավելի վատ վիճակում կլինեմ:
- Ես դեռ կստանամ նույն խնամքն ու ծառայությունները:
- Արդյո՞ք դա ինձ ավելի թանկ կարժենա:
- Որո՞նք են ինձ հասանելի այլ տարբերակները:

Իմ ծառայություններ տրամադրողը ցանկանում է բարձրացնել գները

- Արդյո՞ք ամեն ինչ ինձ ավելի թանկ կարժենա, թե՞ միայն իմ անձնական խնամքը:
- Կարո՞ղ եք ինձ ցույց տալ, թե ինչպես է փոխվելու իմ բյուջեն:
- Իմ ծառայության փաթեթի դրամական միջոցները կփոխհատուցե՞ն փոփոխությունները:

Իմ ծառայություններ տրամադրողը ցանկանում է փոխել կամ երկարացնել իմ խնամքի և ծառայությունների ժամանակը

- Ինչո՞ւ է հիմա ավելի երկար տևում նույն խնամքն ու ծառայությունները տրամադրելը:
- Ես գոհ եմ իմ ընթացիկ պայմանավորվածություններից. կարո՞ղ եմ ամեն ինչ պահել այնպես, ինչպես կա:
- Ինչպե՞ս կշարունակեմ ստանալ իմ հիմնական ծառայությունները ճիշտ ժամանակին:

Իմ ծառայություններ տրամադրողը խնդրեց ինձ ինչ-որ բան ստորագրել

- Ի՞նչ եք խնդրում, որ ստորագրեմ:
- Կարո՞ղ եմ ժամանակ ունենալ դրա մասին մտածելու համար:
- Ես վստահ չեմ, որ լիովին հասկանում եմ այս փաստաթուղթը: Կա՞մ մեկը, ով կարող է օգնել բացատրել այն:
- Կստանա՞մ իմ ստորագրած փաստաթղթերի պատճենները:

Իմ ծառայություններ տրամադրողը ինձ ասաց, որ դադարեցնում է իմ խնամքն ու ծառայությունները

- Որո՞նք են իմ խնամքը դադարեցնելու պատճառները:
- Ինչպե՞ս կարող եք դադարեցնել իմ խնամքը, երբ մենք պայմանագիր ունենք:
- Ինչպե՞ս կստանամ իմ խնամքն ու ծառայությունները, եթե դուք դադարեցնեք իմ խնամքը:

Եթե ձեր ծառայություններ տրամադրողը դադարեցրել է ձեր խնամքն ու ծառայություններն առանց ձեր համաձայնության, կարող եք դիմել Չանձնաժողովին օգնության համար:

Ձեր ստուգացանկը

Ես հասկանում եմ, թե ինչ փոփոխություններ են:	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ	<input type="checkbox"/> Վստահ չեմ
Ես հասկանում եմ, թե ինչու են փոփոխությունները կատարվում:	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ	<input type="checkbox"/> Վստահ չեմ
Ես հասկանում եմ, թե ինչու է դա ինձ ավելի թանկ արժենում:	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ	<input type="checkbox"/> Վստահ չեմ
Ինձ ընտրության հնարավորություն տրվե՞լ է:	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ	<input type="checkbox"/> Վստահ չեմ
Ես ունե՞մ ինձ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները այս փոփոխությունների վերաբերյալ:	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ	<input type="checkbox"/> Վստահ չեմ
Ինձ ժամանակ տրվե՞լ է մտածելու այս փոփոխությունների մասին:	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ	<input type="checkbox"/> Վստահ չեմ
Ես ունե՞մ որևէ փաստաթղթի պատճեն, որը ինձ խնդրել են ստորագրել:	<input type="checkbox"/> Այո	<input type="checkbox"/> Ոչ	<input type="checkbox"/> Վստահ չեմ

Եթե դուք պատասխանել եք **ոչ** կամ **վստահ չեմ** այս հարցերից որևէ մեկին, դուք կարող եք.

- Խոսել ձեր ծառայություններ տրամադրողի հետ հավելյալ տեղեկատվության համար
- Կապ հաստատել Տարեցների խնամքի որակի և անվտանգության հանձնաժողովի հետ



Տարեցների խնամքի որակի և անվտանգության հանձնաժողովը ճանաչում է Ավստրալիայում երկրի Ավանդական Տերերին և նրանց շարունակական կապը ցամաքի, ծովի և համայնքի հետ: Մենք մեր հարգանքն ենք հայտնում նրանց և նրանց մշակույթներին, ինչպես նաև Ավագներին՝ անցյալ և ներկա:

Մայիս, 2023թ



Հեռախոս
1800 951 822



Կայք
agedcarequality.gov.au



Գրեք
Aged Care Quality and Safety Commission
GPO Box 9819, ձեր մայրաքաղաքում